ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

***Արվեստագիտության թեկնածու,***
***Երևանի Կոմիտասի անվան պետական***
***կոնսերվատորիայի դոցենտ***
E-mail: antbaghdasaryan@gmail.com
Doi. 10.58580/18290019-2023.1.64-112

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական
խորհրդի երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի՝
2.6.2023 թ., ընդունվել է տպագրության՝ 10.6.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.5.2021 թ.

# Ժողովրդական երաժշտական գործիքագիտության նոր աշխատություն

*Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) երաշխավորությամբ և պետական հովանավորությամբ լույս է տեսել նույն կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի դոցենտ, երաժշտագետ Անահիտ Կիրակոսյանի «Հայ ժողովրդական նվագարաններ» խորագրով ձեռնարկը դպրոցականների համար (Եր., «Ամրոց գրուպ», 2022 թ., 32 էջ, նկարներով, հայերեն և անգլերեն լեզուներով):*

*Ա. Կիրակոսյանը հայ երաժշտական ֆոլկլորագիտության դասական Մարգարիտ Բրուտյանի (1922-2002 թթ.) սաներից է, հայ ժողովրդական երաժշտության, և վերջինիս կատարողական արվեստի ճանաչված գիտակ և հետազոտող: Ոլորտներին նվիրված բազմաթիվ հոդվածների, նաև ձայնագրյալ ժողովածուի և մենագրությունների հեղինակ է: Այդ թվում՝ «Իրանի Սպահանի շրջանի Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի» (Փասադենա, 1996 թ.), «Հովհաննես Դարբինյան. Խմբավարն ու թառահարը» (Եր., 2000), «Մարգարիտ Բրուտյան. Կենսամատենագիտություն» (Եր., 2000 թ., 2007 թ.), «Արգաս Ոսկանյան – Մանկավարժը և հայ երգեցողության դպրոցը» (Եր., 2008 թ.) և այլն:*

*Կիրակոսյանը հայտնի է և հայ ավանդական նվագարանային երաժշտությանը նվիրված աշխատություններով: Նրա գրչին են պատկանում «Հայ դուդուկահարներ» խորագրով բաժինը «Դուդուկը» գիրք-ալբոմում (Եր., 2007, UNESCO), «Հայկական ժողովրդական նվագարաններ» գիրք-ալբոմը (համահեղինակ՝ Ա. Բաղդասարյան, Եր., 2008):*

*Հատկապես նշելի է Կիրակոսյանի «Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ» (Եր., 2011 թ.) ծավալուն աշխատությունը, որը ոլորտի ազգային նվագարանների, նաև, մասնավորապես, ԻԱ (XX) և, մասամբ, ԻԱ (XXI) դարերի կատարողների (դուդուկահարների, սրնգահարների, թառահարների, քամանչահարների, սանթուրահարների և այլ նվագահարների), և ավանդական կատարողական խմբերի յուրօրինակ հանրագիտարան է:*

*Կիրակոսյանի նվագարանագիտական աշխատություններից է և ներկա «Ձեռնարկը»: Այն դպրոցահասակ ընթերցողին ուղղված հայ ժողովրդական նվագարանների մասին առաջին և այժմ միակ հրատարակությունն է մեզանում: «Ձեռնարկում» ներդաշնակորեն միահյուսվել են հեղինակի մասնագիտական երեսակներից 2-ը հետազոտական և մանկավարժական (1. էջ 447): Նյութը ներկայացված է պատշաճ գիտական մակարդակով, նաև գեղեցիկ հայերենով, միաժամանակ պարզ, մատչելի լեզվով, ընթեռնելի և հասու պատանեկան ընկալմանը: Վերջինիս նպաստում են և «Ձեռնարկի» կուռ կառուցվածքը, նյութի կանոնավոր դասավորությունը, բովանդակության ծավալման, զարգացման տրամաբանական ընթացքը, որ կատարվում է խնդրո թեմային լիովին համապատասխան, միանգամայն ընդունելի և ողջունելի «ընդհանուրից դեպի մասնավորը» շահեկան սկզբունքով:*

*Այսպես, «Ձեռնարկի» Առաջաբանում (էջ 4) տրված են ընդհանուր գիտելիքներ «նվագարան» երևույթի, նվագարանային տեսակների, նվագածու «վարպետ կատարողի» մասին, ինչն ուղեկցվում ու հավելվում է տեղին բերված հղումներով՝ Սուրբ Գրքին, հայ միջնադարյան պատմագրությանը, մանրանկարչությանը:*

*Ուշագրավ է, որ Առաջաբանում և հետագա տեքստում կիրառվող, կենցաղում և հայ երաժշտագիտության մեջ ընդունված և տարածված «երաժշտական գործիք» արտահայտության հետ մեկտեղ, շրջանառվում է մեզանում համեմատաբար սակավ հանդիպող «նվագարան» եզրույթը: Ցանկալի է, որ այս հնուց ավանդված, հայեցի, գեղեցիկ եզրույթն իր ածանցյալ արտահայտություններով՝ նվագարանային կամ «նվագարանական» երաժշտություն, «նվագածու»* և այլն, ավելի լայն կիրառվի հայերիս մեջ, և հաստատապես ընդգրկվի մայրենի լեզվի բառապաշարում արդեն իսկ դպրոցական հասակից:*

*Առաջաբանին հաջորդում է խնդրո մասնավոր ոլորտների մանրամասն դիտարկումը: Երեք առանձին բաժիններով ներկայացվում են հնամենի, բայց և մեր օրերում ևս խիստ կենսունակ, հայկական միջավայրում տարածված, սիրված ավանդական նվագարանները, յուրաքանչյուրն*

* Ա. Կիրակոսյանը 1980 թվականից անընդմեջ դասավանդում է ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում: Վարում է «հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Կատարողական արվեստ», անցյալ տարիներին նաև «հայկական նոտագրություն», դասընթացները, ղեկավարում է ֆոլկլորագիտական մասնագիտական դասարան:

*իր տեսականու «բազմանդամ ընտանիքով»: Դրանք են փայտյա փողային շվին, սրինգը, գուռնան, պկուն պարկապգուկը, դուդուկը, նաև մանկական շվիկը, թութակը* (էջ 8-13), լարային-կսմիթային սազը, ուդը, թառը, քանոնը, լարային-աղեղնավոր քամանչան, քամանին (էջ 14-19), հարվածային դհոլը, դափը, լարային-հարվածային սանթուրը (էջ 20-23): Անդրադարձ է կատարվում նաև հայ եկեղեցու ծիսաարարողակարգային «դողանջող և աղմկային» քշոցին, զանգին, կոչնակին, ծնծղային**: Նշելի է, որ հեղինակը նվագարանները նկարագրում է հնարավորինս լայն իմացական և տեղեկատվական շրջանակներում՝ դիտարկելով նվագարանի ծագումը, անվան ստուգաբանությունը, կիրառման տարբեր ոլորտները, անհատ կատարողները, ներկայացվում են նվագարանների հետ կապված հետաքրքրաշարժ առասպելները և այլն:*

*«Զեռնարկը» շարունակվում է հայ նվագարանային երաժշտության ևս մեկ ոլորտի դիտարկմամբ: Դա անսամբլային նվագածության արվեստն է (էջ 24-26), որն, ինչպես հայտնի է, հնագույն ծագում ունի հայոց մեջ, և ազգային մշակույթի անքակտելի մասն է եղել մշտապես: Հեղինակը բացատրում է, թե ինչ է նվագարանային անսամբլը, ապա անդրադառնում հայ ավանդական նվագարանային անսամբլներին՝ հղելով Կոմիտաս վարդապետին, և ներկայացնում ժողովրդական նվագարաններից բաղկացած մերօրյա անսամբլները և դրանց յուրահատկությունները:*

*«Զեռնարկի» վերջաբանում խնդրո հայ ժողովրդական նվագարանները դիտարկվում են հայ կոմպոզիտորական ստեղծագործության տեսանկյունից (էջ 27): Հիշատակվում են կոմպոզիտորներ Խաչատուր Ավետիսյանը՝ քանոնի հայ ժամանակակից կատարողական արվեստի հիմնադիրը, Յուրի Գևորգյանը, Գրիգոր Հախինյանը, Ռուբեն Ալթունյանը, որոնք ստեղծել են բազմաժանր երկացանկ քանոնի, դուդուկի, շվիի համար: Հիշատակվում է և ժամանակակից նշանավոր կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի անդրադարձը հայ ժողովրդական նվագարաններին, մասնավորապես գուռնային, դուդուկին՝ կոմպոզիտորի 3-րդ Սիմֆոնիայում, քամանչային՝ 5-րդ Սիմֆոնիայում***:*

*Խնդրո ոլորտը հայտնի է իր շնորհալի, բազմահմուտ նվագարանագործ վարպետներով՝ Վարդան Բունի, Աշոտ Պետրոսյանց, Մարտին Խաչատրյան, Գեորգի Մինասով, Միհրան Դեմիրճյան, Հակոբ Խալաթյան, Սամվել Երկնափեշյան, Ռուբիկ Ռուշանյան, Ալբերտ Զաքարյան և շատ ուրիշներ, որոնք ոչ միայն պատրաստել են ավանդական նվագարաններ, այլ նաև, հեղինակի խոսքերով՝ փնտրել են վերջիններիս «հնչողության նոր երանգներ», զգալիորեն լայնացրել դրանց տեխնիկական հնարավորությունները (էջ 27):*

*«Զեռնարկը» աչքի է ընկնում իր հարուստ նկարագրությամբ: Գունավոր, վառ, գունեղ, տեխնիկական հմտությամբ, գեղեցիկ ձևավորմամբ, գեղարվեստական բարձր մակարդակով կատարված լուսանկարների միջոցով ներկայացված են «Զեռնարկում» դիտարկվող բոլոր նվագարանները*, ինչպես նաև նվագարանային խմբերը, որ լավագույնս լրացնում է հեղինակի բովանդակալից խոսքը: Վերջինս մանրամասնում և ամբողջացնում են տեղին բերված Ծանոթագրությունները (էջ 29): Միաժամանակ խնդրո մասին հավելյալ տեղեկություններ և գիտելիքներ ստանալու համար հեղինակն առաջարկում է նվագարանագիտական գրականության մի փոքր ընտրանի (էջ 28):*

*Հայ ժողովրդական նվագարանները և նվագարանային երաժշտությունը հայ իրականության մշակութային լայնածավալ, բազմաբովանդակ, բազմաճյուղ երևույթներից է, որը հեղինակը դպրոցական «Զեռնարկի» սուղ շրջանակներում ներկայացնում է հակիրճ, բայց և մասնագիտական բարձր հմտությամբ՝ հնարավորինս հանգամանորեն և ամբողջացված:*

*Հատկապես նշելի է «Զեռնարկի» ջերմ, անբռնազբոսիկ «մթնոլորտը», որն ի հայտ է գալիս շարադրանքի արդեն իսկ սկզբից՝ «Սիրելի փոքրիկ բարեկամ, այս գրքույկը քեզ համար է» հեղինակային ուղերձով (էջ 4): Հեղինակն, ասես, մտերմիկ զրուցում է պատանի ընթերցողի հետ, ուղղորդելով նրան դեպի հայկական նվագարանների, և դրանով իսկ՝ ազգային նվագարանային երաժշտության այնքան հետաքրքիր և գրավիչ աշխարհը: Նշելի է, որ «Զեռնարկը» հետաքրքիր և ուսանելի կարող է լինել նաև մեծահասակների համար:*

*«Զեռնարկը» աչքի է ընկնում տպագրական բարձր արվեստով, որը «Գեղարվեստ» հանրապետական և միջազգային մրցանակաբաշխությունների մրցանակակիր, հրատարակչական ոլորտում վաղուց արդեն հայտնի, հեղինակավոր «Ամրոց գրուպ» ՍՊԸ-ի բազմաբեղուն գործունեության գլխավոր հատկանիշներից է (տնօրեն Վլադիմիր Խաչատրյան):*

*Անահիտ Կիրակոսյանի «Զեռնարկը» երաժշտագիտական և, մասնավորապես, նվագարանագիտական եռանդուն, արգասավոր գործունեության ևս մեկ նվաճումն է, որ դիտարկելի է ոչ միայն դպրոցական գրականության շրջանակներում, այլև, ընդհանուր առմամբ հայ նվագարանագիտության մեծածավալ ասպարեզում նույնպես**:*

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր 2-րդ, Վենետիկ, 1837 թ.:

***Հեղինակի մասին տե՛ս էջ 12: About the author, go to 13. Об авторе, см.: стр. 13.***

* Հիշատակելի է, որ հնում, ինչպես վկայված է հայ միջնադարյան պատմիչների կողմից և մանրանկարներում, հայկական առօրյայում կիրառվել են նաև պղնձյա փողային նվագարաններ (մասնավորապես՝ պատերազմական գործողությունների

** Ծնծղաներն ավանդաբար օգտագործվել են, մասնավորապես, Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) հայկական եկեղեցիներում:

*** Եվս մեկ ավանդական նվագարան՝ դափը Ա. Տերտերյանը գործի է դրել իր 7-րդ Սիմֆոնիայում:

* Նվագարանների լուսանկարների հեղինակ և ձևավորող՝ Վահան Պողոսյան:

** Հարկ է նշել, որ Ա. Կիրակոսյանը ներկայումս կազմում է հայ նվագարանագիտության մեզանում առաջին այժմեական կարևոր նշանակության և խիստ անհրաժեշտ մատենագիտությունը: